

ՀԱՀ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

Հարգելի ՀԱՀ Շարունակական կրթության բաժնի ուսանող,

Բարի գալուստ ՀԱՀ Շարունակական կրթության բաժին: Մեր բաժնի դասընթացները հնարավորություն են տալիս ընդլայնել Ձեր գիտելիքները, խթանել անձնային և մասնագիտական զարգացումը, որը լավագույնս կնպաստի Ձեր կրթական և մասնագիտական նպատակների իրականացմանը: Մենք կոգնենք Ձեզ իրագործել Ձեր ներուժը թե ՀԱՀ ընդունելության, և թե գիտելիքների ու հմտությունների ընդլայնման հարցում՝ աշխատաշուկայում ավելի մրցունակ դառնալու համար: ՀԱՀ Շարունակական կրթության բաժինը կտա գիտելիքներ և հմտություններ, որոնք կօգնեն Ձեզ հասնել Ձեր նպատակներին անկախ այն բանից, թե ինչպիսին են Ձեր անհատական ձգտումները: Խնդրում ենք մանրամասն կարդալ կանոնակարգը: Չարցերի դեպքում կարող եք մոտենալ մեր գրասենյակ կամ դիմել Ձեր դասախոսին: Մաղթում ենք ձեզ հաճելի ուսումնառություն ՀԱՀ-ում և պայծառ ապագա:

Բաց դաս

Նախքան Շարունակական կրթության բաժնի դասընթացին գրանցվելը, ուսանողերը կարող են մասնակցել բաց դասին: Բաց դասերը ՀԱՀ Շարունակական կրթության բաժնի կողմից առաջարկված ընթացիկ դասեր են, որոնք հասանելի են բոլոր պոտենցիալ դիմորդներին անվճար: Բաց դասերի նպատակն է Ձեզ հնարավորություն տալ ծանոթանալու ՀԱՀ Շարունակական կրթության բաժնի կողմից կազմակերպված դասերին: Խնդրում ենք մանրամասն կարդալ բաց դասերի կանոնակարգը <http://extension.aua.am/attend-an-open-class/> հղումով:

Գրանցում

Ուսանողները գրանցվում են ՀԱՀ Շարունակական կրթության բաժնի դասընթացներին օնլայն՝ im.aua.am հղումով: ՀԱՀ Շարունակական կրթության բաժնի դասընթացներին գրանցվելու համար խնդրում ենք հետևել [extension.aua.am/online-registration- 2](http://extension.aua.am/online-registration-2) -ում ներկայացված ցուցումներին:

Մակարդակի փոփոխություն

ՀԱՀ Շարունակական կրթության բաժնի Ընդհանուր անգլերենի դասընթացներին գրանցված ուսանողները կարող են դիմել դասախոսին դասընթացի մակարդակը փոխելու (մեկ մակարդակ վերև կամ ներքև) նպատակով նախքան դասընթացի 10 տոկոսն անցնելը: Դասախոսը ուսանողի հետ միասին կվերանայի ուսանողի գիտելիքների մակարդակը և դիմում կներկայացնի ՀԱՀ Շարունակական կրթության բաժնի ղեկավարին՝ հաստատման համար:

Գրանցման չեղարկում և դասընթացի հետաձգում

Դասընթացին գրանցված ուսանողը կարող է չեղարկել իր գրանցումը և ստանալ գումարի փոխհատուցում՝ 5000 դրամ պահումով, սակայն դասընթացից հրաժարվելու դիմումը անհրաժեշտ է ներկայացնել առաջին դասից հետո: Եթե ուսանողը դիմումը ներկայացնում է ավելի ուշ, գումարի վերադարձ տեղի չի ունենում: Բացառիկ դեպքերում ուսանողը կարող է դիմել ՀԱՀ Շարունակական Կրթության բաժնի տնօրենին՝ գրավոր կերպով ներկայացնելով հանգամանքներ, որոնք կարող են դիմումի վերանայման հիմք հանդիսանալ: Հաստատման դեպքում ուսանողը կստանա հնարավորություն մոտակա երեք ամսվա ընթացքում ներառվելու ՀԱՀ Շարունակական բաժնի դասընթացներից որևէ մեկին: Եթե ուսանողը չի գրանցվում որևէ դասի նշված ժամանակահատվածում, վճարված գումարը չի փոխհատուցվում: Խնդրում ենք նկատի ունենալ նաև, որ այս կանոնը չի վերաբերում մինչև տասներկու ժամանոց դասընթացներին, որոնց դեպքում վճարի փոխհատուցում չի գործում:

Զեղչեր: 10% զեղչ է տրամադրվում՝

1. ՀԱՀ շրջանավարտներին
2. ՀԱՀ Շարունակական կրթության բաժնում մեկ կամ ավել դասընթացի մասնակցած ուսանողներին
3. Գործընկեր կազմակերպություններին, որոնք 6 և ավել աշխատակցով են ներկայանում միևնույն դասընթացին

Մասնակցություն

Դասընթացի մասնակիցներին չի թույլատրվում դաս բաց թողնել: Եթե ուսանողի մասնակցությունը 65%-ից ցածր է լինում, ուսանողին Մասնակցության վկայական չի տրվում:

Առաջադիմություն

Ընդհանուր անգլերեն.

ՀԱՀ Շարունակական կրթության բաժնի Ընդհանուր անգլերենի դասընթացի անցողիկ գնահատականն է 70%: Եթե ուսանողի գնահատականը ցածր է լինում, նա չի ստանում ավարտական վկայական և զրկվում է հաջորդ մակարդակ տեղափոխվելու հնարավորությունից: Ուսանողը ստանում է մասնակցության վկայական, որտեղ նշված է լինում նրա գնահատականը:

Մասնագիտական զարգացման և այլ դասընթացներ.

ՀԱՀ Շարունակական կրթության բաժնի այլ դասընթացների անցողիկ գնահատականը 70% է: Եթե ուսանողը ստանում է 69% և ավելի ցածր, նա չի ստանում մասնակցության վկայական, և չի կարող անցնել դասընթացի հաջորդ փուլ (շարունակական դասընթացների դեպքում):

ID քարտեր

Երբ ուսանողն ընդգրկվում է դասընթացի խմբի մեջ, նա ստանում է ID քարտ: Ուսանողը պետք է իր հետ ունենա քարտը ամեն անգամ ՀԱՀ մտնելիս: Քարտը դասընթացի մասնակից լինելու ապացույց է: ID քարտը նաև հնարավորություն է տալիս ուսանողին օգտվել ՀԱՀ Փափագյան գրադարանից: Ուսանողը վերադարձնում է ID քարտը դասընթացի ավարտին: ID քարտը կորցնելու կամ վնասելու դեպքում ուսանողը պարտավոր է վճարել տուգանք՝ 1000 դրամի չափով:

Դասի տեղափոխում

Տոների հետ համընկնող բոլոր դասերը կլրացվեն: Տեղափոխվող դասի օրը կորոշվի քննարկման արդյունքում:

Դասի տևողությունը և ընդմիջումները

ՀԱՀ Շարունակական կրթության բաժնի մեկ դասաժամը հավասար է 50 րոպեի. յուրաքանչյուր մեկ ժամում հնարավոր է առավելագույնը 10 րոպեանոց ընդմիջում: Դասախոսը և ուսանողներն են որոշում, թե կոնկրետ երբ կկազմակերպվի ընդմիջումը:

Դասացուցակը և դասի լոգիստիկան

Դասերի դասացուցակը և համապատասխան լսարանի նախապատրաստումը ՀԱՀ Շարունակական կրթության բաժնի ղեկավարության պարտականությունն է: Դասախոսները և ուսանողները չեն կարող փոխել կամ փոփոխություններ պահանջել դասասենյակի կամ ժամի հետ կապված, չհաշված որոշակի իրավիճակների: Դասը չեղարկվելու դեպքում ուսանողները կտեղեկացվեն դասի սկզբից 2 ժամ առաջ: Բոլոր չեղարկված դասերը կլրացվեն՝ հարմարեցնելով դասախոսի և ուսանողների հետ:

Ուսանողի գնահատում

ՀԱՀ Շարունակական կրթության բաժնի բոլոր դասընթացների ժամանակ անց են կացվում թեստեր՝ ուսանողի առաջադիմությունը գնահատելու համար:

Դասախոսի նշանակում

ՀԱՀ Շարունակական կրթության բաժնի ուսանողները չունեն դասախոս ընտրելու հնարավորություն: Դասախոսի ընտրության հարցում դեր են խաղում մի քանի գործոններ, որոնք ներառում են որակավորումները, փորձը և կատարողականությունը:

Դասընթացի գնահատում

Յուրաքանչյուր դասընթացի ավարտին ՀԱՀ Շարունակական կրթության բաժնի ուսանողները գնահատում են դասախոսին և դասընթացը: Ուսանողներին կոչ է արվում լրջորեն, անկեղծորեն և պատասխանատու կերպով մոտենալ այս գնահատմանը: Այս գնահատումները մեր որակի շարունակական բարելավման գործընթացի անքակտելի մասն են կազմում:

Վարքականոններ

ՀԱՀ Շարունակական կրթության բաժնի ուսանողները պարտավոր են վարվել սահմանված նորմերի համաձայն, որոնք են՝ ա) դասերին ժամանակին ներկայանալը, բ) ողջ դասին ներկա լինելը, գ) դասի ժամանակ ուշադիր լինելը, գ) բջջային հեռախոսներն անջատելը, դ) անհամապատասխան վարքագիծ չցուցաբերելը, օրինակ չմասնակցել ցանկացած այնպիսի գործողության, որն այս կամ այն կերպ խաթարում է համալսարանի, ինչպես նաև ուսանողների, դասախոսների, անձնակազմի, հյուրերի և շրջակա համայնքի բնականոն գործելակերպին, ե) համալսարանի գույքի և սարքավորումների համար հոգավր: